ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 8-րդ փողոցն անվանակոչել գեղանկարիչ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Էդուարդ Իսաբեկյանի անվամբ՝ «Էդուարդ Իսաբեկյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ԱՐՄԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գեղանկարիչ Էդուարդ Իսաբեկյանը ծնվել է 1914թ. նոյեմբերի 8-ին, Արևելյան Հայաստանի Իգդիր քաղաքում (այժմ՝ Թուրքիայում):

1931թ. ավարտել է Երևանի գեղարդ տեխնիկումը (այժմ՝ Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան), 1941թ.՝ Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիան: 1945-2000թթ. դասավանդել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում (1963թ.-ից՝ պրոֆեսոր): 1967-1986թթ. եղել է Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրենը: 1941-1945թթ. Հայրենական Մեծ պատերազմի տարիներին ստեղծել է ժողովրդի հերոսների և հայոց ազգային-ազատագրական պայքարը պատկերող կտավներ՝ «Մարտ քաղաքի համար» (1942թ.), «Դավիթ Բեկ» (1945թ.), «Տանյա» (1946թ.): Թեմատիկ-կոմպոզիցիոն գործերն աչքի են ընկնում մոնումենտալ արտահայտչականությամբ, դինամիկ հորինվածքով, քաղաքացիական հնչողությամբ՝ «Հաղպատի գյուղացիների ապստամբությունը 1903-ին» (1957թ.), «Պատասխան Հազկերտին» (1960թ.): Հայ դիմանկարչության նվաճումներից են «Մոր դիմանկարը» (1944թ.), «Ակսել Բակունց» (1956թ.), «Հորս դիմանկարը» (1995թ.) գործերը: Բնապատկերների թեմատիկ առանցքը Հայաստանի բնության, հնադարյան բերդերի ու տաճարների էպիկ, նկարագիրն է՝ «Տաթևի ձորում» (1959թ.), «Խնձորեսկ» (1962թ.), «Արաքսի ափին» (1980թ.): Դրամատիկ լարվածությամբ են բնորոշվում «Արտավազդի մահը» (1966թ.), «Սրտավազդ և Կլեոպատրա» (1981թ.) և այդ շարքի մյուս գործերը: Նկարազարդել է Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» (1952թ.), Սերո Խանզադյանի «Մխիթար Սպարապետ» (1963թ.) պատմավեպերը: Հեղինակել է «Իգդիր» վեպը (1994թ.): Ունեցել է անհատական ցուցահանդեսներ Երևանում (1985թ., 2004թ.), Մոսկվայում (1988թ.): «Ավարայրի ճակատամարտը», «Հարսանյաց երթ», «Առավոտ», «Անհանգիստ ձիեր», «Արաքսի ափին», «Ձիեր ջրվեժի մոտ», «Կիրճում» (1982-1984թթ.) գործերի համար ստացել է Հայաստանի պետական մրցանակ (1985թ.):

1963թ. Էդուարդ Իսաբեկյանն արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական նկարչի, 2001թ.՝ «Երևանի պատվավոր քաղաքացու» կոչումներին, 2004թ. պարգևատրվել է հայ եկեղեցու Սբ. Մեսրոպ-Սբ. Սահակ շքանշանով:

Էդուարդ Իսաբեկյանը մահացել է 2007թ. օգոստոսի 20-ին, Երևանում:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 8-րդ փողոցն անվանակոչել գեղանկարիչ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Էդուարդ Իսաբեկյանի անվամբ՝ «Էդուարդ Իսաբեկյան փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ԱՐՄԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Էդուարդ Իսաբեկյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Էդուարդ Իսաբեկյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ԱՐՄԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**